

Քննարկվեց Ա/Ձ Արթուր Մովսիսյանի 23.04.2012թ-ի դիմում-բողոքը «ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 17.04.2012թ. թիվ 2114530 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 02.04.2012թ. թիվ 2203607 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Արթուր Մովսիսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 05.04.2012թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2203607 արձանագրությունը, որում արձանագրվել է, որ «ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ Կ/Հ բաժնի գլխավոր հարկային տեսուչ Վահան Սողոմոնյանը և հարկային տեսուչ Դավիթ Դավթյանը 05.04.2012թ. ժամը 17:45-ին Ա/Ձ Արթուր Մովսիսյանին պատկանող ք.Արմավիր, Շահումյան 56 հասցեում գործող ծաղկի խանութից կատարեցին հսկիչ գնում՝ 1 հատ ծաղկեփունջ 3000 դրամ ընդհանուր արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Գումարը Ա/Ձ Արթուր Մովսիսյանի կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից Ա/Ձ Արթուր Մովսիսյանին ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 17:48-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվություն, որում հասույթը կազմում էր 8700 դրամ և տեսուչների պահանջով չմուտքագրված գումարը՝ 3000 դրամը, մուտքագրվել է ՀԴՄ և ժամը 17:49-ին կրկին դուրս է բերվել նոր <Z> հաշվետվություն 3000 դրամ հասույթով:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը «ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի կողմից 10.04.2012թ-ին հրապարակվել է թիվ 2114530 հանձնարարագիրը, որի համաձայն կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 17.04.2012թ-ին կազմվել է թիվ 2114530 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հիմք ընդունելով Ա/Ձ Արթուր Մովսիսյանի մոտ «ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 02.04.2012թ. թիվ 2203607 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 2205477 արձանագրությունը, որով արձանագրվել է Ա/Ձ Արթուր Մովսիսյանի կողմից «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Մ որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը, և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150 000 դրամի չափով:

Ա/Ձ Արթուր Մովսիսյանի դիմում-բողոքում մասնավորապես նշված է.

Ցանկանում եմ տեղեկացնել մի արտառոց դեպքի մասին, որը տեղի է ունեցել ս.թ. ապրիլի 5-ին ժամը 17:30-ի սահմաններում ք.Արմավիր, Շահումյան-56 հասցեում գտնվող և իմ կողմից տնօրինվող ծաղկի խանութում:

Նշված օրը և ժամին ինքս ներկա չեմ եղել խանութում և դեպքերի ականատեսը չեմ եղել, հետևաբար ստորև ներկայացվում է խանութի դիզայներ-վաճառողուհի Անուշ Թուջարյանի բառերով գրված բացատրությունը տեղի ունեցածի վերաբերյալ:

<05.04.2012թ ժամը 17<sup>30</sup>-ի կողմերը, ոմն մեկը՝ մոտավորապես 30 տարեկան տղամարդ եկավ ներկայացավ Արտաշ անունով և հայտնեց որ ցանկանում է սզո արարողության համար գնել զամբյուղ և ծաղկեպսակ: Մոտ 20 րոպե զրուցելով ինձ հետ խորամանկորեն գտավ ընդհանուր ծանոթներ՝ նախ տալով մեր տնօրենի անունը, նաև բարեկամիս տղաների անունները շահեց իմ վստահությունը: Զամբյուղն ընտրելուց հետո տպավորություն էր ստեղծում իբր գանգահարում է ընկերներին, որպեսզի գան ծաղկեպսակ ընտրեն:

Ազդելով մարդու հոգեբանական նյարդերի վրա ասաց, թե ցանկանում է զամբյուղը տանի դնի մեքենայի մեջ (առանց գումարը վճարելու), մինչև ընկերները գան ծաղկեպսակը ընտրեն, այդ ժամանակ ընդհանուր գումարը կվճարեն:

Ցանկանալով նրան օգնել առաջարկեցի ծաղկի զամբյուղը թողնել խանութում, որպեսզի դրսի շոգի հետևանքով չթառամի, սակայն նա ասաց, որ մեքենայի մեջ օդափոխիչ կա և ծաղիկը չի թառամի: Նա այնպիսի համառություն ցուցաբերեց առանց վճարելու դուրս գալու համար, որ նույնիսկ ազդված տեղի ունեցածով՝ ամաչեցի դիմադրել: Վերցնելով ծաղկի զամբյուղը դուրս եկավ խանութից, որպեսզի այն դնի մեքենան ու հետ գա խանութ, սակայն այդպես էլ չվերադարձավ: Մի քանի րոպե անց խանութ եկան հարկային տեսչության աշխատակիցներ՝ Վահան Սողոմոնյանը և Դավիթ Դավթյանը՝ ձեռքում արդեն նախօրոք կազմած արձանագրությունը: Վահան Սողոմոնյանը բարձր տոնով և ոչ պետական աշխատակցին վայել պահվածքով սկսեց գոռոզալ, իսկ Դավիթ Դավթյանն իրեն նետեց դեպի հսկիչ-դրամարկղային մեքենան: Ես հարցրեցի նրան՝ արդյոք իրավունք ունի մոտենալու ՀԴՄ-ին առանց տնօրենի ներկայության, նա պատասխանեց, որ մենք ամեն ինչի իրավունք էլ ունենք: Ես զանգահարեցի տնօրենին և կանչեցի: Տնօրենը եկավ և նույն անհարգալից վերաբերմունքով սկսեցին խոսել տնօրենի հետ: Այդ ընթացքում Դավիթ Դավթյանը դուրս եկավ և ներս մտավ ձեռքին մեզ Արտաշ ներկայացածի վերցրած ծաղկի զամբյուղը և ստիպում էր հետ վերցնելու այն և վերադարձնելու գումարը, որը այդպես էլ չէին վճարել: Բացի այդ, տնօրենին պահանջում էին ստորագրել արձանագրությունը: Տնօրենը չստորագրելով արձանագրությունը պնդեց, որ ՀԴՄ-ի կտրոնը տրամադրում են կանխիկ դրամով առևտրի դեպքում, իսկ արձանագրությունը կստորագրի, եթե ներս բերեն ոմն Արտաշին և ապացուցեն, որ նա վճարել է և ՀԴՄ կտրոն չի ստացել: Տնօրենը չստորագրեց որևէ փաստաթուղթ: Վահան Սողոմոնյանը և Դավիթ Դավթյանը հեռացան խանութից իրենց հետ տանելով ծաղկի զամբյուղը՝ հորդորելով, թե տանելու ենք նկարելու և հիմնավորելու, որ այստեղից ենք գնել>:

Շեռանալուց հետո հեռախոսով ինձ հրավիրել են հարկային տեսչություն ստուգմանը վերաբերող փաստաթղթերը ստորագրելու նպատակով, սակայն չեմ ենթարկվել նրանց պահանջներին, քանի որ գիտակցում եմ, որ նրանց գործողություններն անօրինական են:

Փոստի միջոցով Արմավիրի ՏՀՏ-ի պետի 12.04.2012թ. թիվ 2242/2 և 06.04.2012թ թիվ 2217/2 նամակներով ստացել եմ իրականացված հսկիչ գնմանը և ստուգմանն առնչվող փաստաթղթերը:

05.04.2012թ. Արմավիրի ՏՀՏ-ի աշխատակիցների ստորագրությամբ կազմված թիվ 2203607 արձանագրությունը ճիշտ չի ներկայացնում իրականում տեղի ունեցածը և իմ կողմից տնօրինվող խանութում թույլ չի տրվել ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջների խախտում, հետևյալ հիմնավորումներով.

1. Իմ կողմից հանձնարարվել է խանութի դիզայներ-վաճառողուհի Անուշ Թուջարյանին ՀԴՄ մուտքագրել բոլոր կանխիկ առևտրի արդյունքում ստացված գումարները և զգուշացվել է, որ ցանկացած տուգանք փոխհատուցվելու է իր հաշվին:

2. Վահան Սողոմոնյանին և Դավիթ Դավթյանին ճանաչում են բոլորը Արմավիր քաղաքում, իսկ Անուշ Թուջարյանը շատ ավելի լավ է ճանաչում, քանի որ վերջին 6 ամիսների ընթացքում ակնհայտ է նրանց առօրյա գործողություններից, որ հստակ նպատակադրված են ինձ պատկանող ծաղկի խանութում արձանագրելու ՀԴՄ շահագործման կանոնների խախտում:

3. Կազմված հանձնարարագրում, արձանագրությունում և համապատասխան ակտում նշված չէ գնորդի՝ ոմն Արտաշի անձնական տվյալները և նրա մասնակցությամբ չեն հիմնավորվել խախտման փաստը:

Եթե սահմանված կարգով հիմնավորվեր ստուգման արդյունքները, ապա ես չէի ձգտի խուսափել պատասխանատվությունից:

Խնդրում եմ անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերել ներկայացված փաստերի նկատմամբ, քննարկել ներկայացված առարկությունները և չեղյալ համարել Արմավիրի ՏՀՏ-ի 05.04.2012թ-ին կազմված թիվ 2203607 արձանագրությունը և ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Արթուր Մովսիսյանի և ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 05.04.2012թ-ին կազմված հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2203607 արձանագրությունում (այսուհետ նաև արձանագրություն) արտացոլված տեղեկությունների ճշտման արդյունքում պարզվել է, որ դրանք, ըստ էության, չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, ըստ արձանագրության. <<< ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ Կ/Հ բաժնի գլխավոր հարկային տեսուչ Վահան Սողոմոնյանը և հարկային տեսուչ Դավիթ Դավթյանը 05.04.2012թ. ժամը 17:45-ին Ա/Ձ Արթուր Մովսիսյանին պատկանող ք.Արմավիր, Շահումյան 56 հասցեում գործող ծաղկի խանութից կատարեցին հսկիչ գնում՝ 1 հատ ծաղկեփունջ 3000 դրամ ընդհանուր արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Գումարը Ա/Ձ Արթուր Մովսիսյանի կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց>:

Սույն բողոքին առնչվող նյութերի և ապացույցների ուսումնասիրման ընթացքում պարզվել է, որ իրականում ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ Կ/Հ բաժնի գլխավոր հարկային տեսուչ Վահան Սողոմոնյանի և հարկային տեսուչ Դավիթ Դավթյանի կողմից որևէ հսկիչ գնում չի իրականացվել: Որպես հսկիչ գնումն իրականացնող անձ հանդես է եկել մի քաղաքացի, որի վերաբերյալ որևէ տեղեկություն թե ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 02.04.2012թ. թիվ 2203607 հանձնարարագրում, թե արձանագրությունում արտացոլված չէ:

<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.4 կետի համաձայն. <Հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսվարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները և հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)՝ վավերացված հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի կնիքով: Ընդ որում, հսկիչ գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում հանձնարարագրում նշվում են նաև այդ անձի տվյալները (ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրային տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, գտնվելու վայրը):

Նշված Հավելված 2-ի 1.6 կետի համաձայն. <Արձանագրության մեջ նշվում են հանձնարարագրի համարը, ամսաթիվը, արձանագրության կազմման վայրը, հսկիչ գնման իրականացման վայրը, ժամանակը, հսկիչ գնումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը, հսկիչ գնումն այլ անձի միջոցով կատարելու դեպքում նաև այդ անձի տվյալները, տնտեսվարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), ստացված արդյունքները:

Վերոգրյալից հետևում է, որ հսկիչ գնումն իրականացվել է <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.4 և 1.6 կետերի պահանջների խախտմամբ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ստուգման ակտը կազմվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն. <Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի նախագիծը կազմվել է 12.03.2012թ-ին, իսկ ստուգման ակտը՝ 17.03.2012թ-ին: Այսինքն, ստուգման ակտը կազմվել է ոչ թե ստուգման ակտի նախագիծը կազմելու օրվանից 5 աշխատանքային օր, այլ 5 օրացուցային օր հետո:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 17.04.2012թ. թիվ 2114530 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ